«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Արմինե Մովսիսյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի, քննարկելով <Միքայել-Ռուզաննա >ՍՊԸ -ի տնօրեն Հրաչյա Գրիգորյանի /այսուհետ՝ դիմումատու/ Արմինե Մովսիսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և համապատասխան կարգապահական տույժ հարուցելու մասին դիմումը, պարզեց՝

Դիմումատուի կողմից ՀՀ Արդարադատության նախարարությանը ներկայացվել է հաղորդում: ՀՀ ԱՆ ուղարկված հաղորդումը ՀՀ ԱՆ վերահսկողության վարչության պետ՝ Ա.Սուչյանի 04.11.2024թ.-ի թիվ /28,1/44847-2024 գրությամբ ուղարկվել է «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ին և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի հիմքով, կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել է կարգապահական վարույթ:

<Միքայել-Ռուզաննա > ՍՊԸ -ի տնօրեն Հրաչյա Գրիգորյանը իր հաղորդմամբ նշել է, որ <Միքայել-Ռուզաննա >ՍՊԸ -ի թիվ ԵԴ/0951/04/18 սնանկության գործով սնանկության կառավարիչ՝ Արմինե Մովսիսյանը չի կարող պատշաճորեն կատարել իր լիազորությունները ,ընդհակառակը վերջինս իր գործողությունները բխեցրել է և բխեցնում է պարտատիրոջ և պարտատիրոջ թիկունքում կանգնած Սարգիս Աղաբեկյանի գլխավորությամբ գործող հանցավոր բանդայի,ինչպես նաև նախկին տնօրեն Ռուզաննա Ավագյանի շահերից :

Հայտի փաստ է ,որ <Միքայել-Ռուզաննա >ՍՊԸ -ն սնանկության եզրին հասցրած Սարգիս Աղաբեկյանը և Ռուզաննա Ավագյանը հանդիսանում են ԵԴ/0608/01/19 քրեական գործով մեղադրյալներ :Անհերքելի փաստ է ,որ սույն գործով պարտատեր Անի Հակոբյանը հանդիսացել և հանդիսանում է Սարգիս Աղաբեկյանի աշխատակիցը տարիներ ի վեր :Պարտատեր ,փաստաբան Անի Հակոբյանի իրավաբանական հասցեն հանդիսացել և հանդիսանում է Սարգիս Աղաբեկյանի սեփականություն հանդիսացող շենքը այն է ք Երևան ,Ազատության 18/1 հասցեում գտնվող շենքը :Սույն գործով սնանկության գործով կառավարիչ ընտրվել է Պարտատիրոջ կողմից :Սնանկության գործով կառավարիչ Արմինե Մովսիսյանը հանդիսացել է Սարգիս Աղաբեկյանի կողմից հիմնադրված <Էսկո-Կոնցեռն> ՍՊ ընկերության բաժնի տնօրեն ,ապա նաև< Էսկո Ֆինանս > ՍՊԸ գրավատան գործադիր տնօրեն :Աշխատանքային տարիների տևողությունը մոտ 7 տարի է :Բացի այդ ներկայացված հանցանքի վերաբերյալ հաղորդման արդյունքում նախաձեռնված քրեական վարույթով քրեաիրավական գնահատական պետք է տրվի Սարգիս Աղաբեկյանի ,փաստաբան Անի Հակոբյանի, դատավոր Տիգրան Փոլադյանի ,սնանկության գործով կառավարի Արմինե Մովսիսյանի գործողություններին պարտապան ընկերությանը կանխամտածված սնանկության հասցնելու ,ինչպես նաև պետությանը հարկեր չվճարելու ,չարամտորեն և կանխամտածված խուսափելու համար :

Դիմումատուն իր բողոքում մատնանշել է որ <Սնանկության մասին > ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջը ,որում ասվում է ,որ կառավարիչի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը ,իսկ նշանակված լինելու դեպքում վաղաժամկետ դադարեցվում են այն

կառավարչի լիազորությունները ,որը 1)**փոխկապակցված է պարտատերերի կամ պարտապանի հետ :**

Դիմումատուի պնդմամբ սնանկության գործով կառավարիչ Արմինե Մովսիսյանը խախտել է <Սնանկության մասին > ՀՀ օրենքի 23.1հոդվածի բոլոր 5 պահանջները ,սկսած անկողմնակալությունից մինչև կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը :

<Միքայել-Ռուզաննա >ՍՊ ընկերության կողմից հայց էր ներկայացվել ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Սարգիս Աղաբեկյանի առոչինչ գործարքի հտևանքներ կիառելու պահանջի մասին :Արդյունքում հարուցվել էր ԵԴ/36262/02/20 քաղաքացիական գործը :Նշված քաղաքացիական գործը Երևանի քաղաքացիական դատարանի Արաբկիրի նստավայրից ուղարկվել էր Սնանկության դատարան :Սնանկության վարույթով պարտապանի ներկայացուցչի լիազորությունները պետք է հաստատվի սնանկության կառավարչի կողմից :Թե ընդհանուր իրավասության դատարանում և թե սնանկության դատարանում սնանկության գործով կառավարիչ Արմինե Մովսիսյանին առաջարկվել է հաստատելու փաստաբան Միեր Շահնազարյանի լիազորությունները :Դատական նիստի ժամանակ սնանկության գործով կառավարիչը հրաժարվեց հաստատելու փաստաբանի լիազորությունները, ուղիղ հակառակ գործելով Պարտապան ընկերության շահերին և սպասարկելով ընկերությանը հանցավոր սխեմայով սնանկության եզրին հասցրած Սարգիս Աղաբեկյանի և նրա հանցակից հանդիսացող <Միքայել-Ռուզաննա >ՍՊԸ -ի նախկին տնօրեն Ռուզաննա Ավագյանի շահերը :Ըստ պարտապան ընկերության տնօրենի սնանկության գործով կառավարիչը շահագրգռված է եղել ընկերության հասցնելու սնանկության ,որը նման պայմաններում բավարար հիմք է Արմինե Մովսիսյանի նկատմամբ հարուցելու կարգապահական վարույթ ,դադարեցնելու սնանկության գործով կառավարչի որակավորումը : Սնանկության գործով կառավարիչը տարիներ շարունակ չարամտորեն հայցեր չի ներկայացրել դատարան ,որը բխել է միայն ՍարգիսԱղաբեկյանի շահերից :Ընկերության տնօրենը նաև սնանկության դատարան է ներկայացրել դիմում կառավարչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ :

Լսումների ընթացքում լսվեց պարտապան ընկերության տնօրեն Հրաչյա Գրիգորյանի դիմում բողոքը և նաև խոսք տրվեց սնանկության գործով կառավարիչ Արմինե Մովսիսյանին ով վերջինս ներկայացրեց իր դիրքորոշումը ըստ ,որի վերջինս հայտնեց ,որ ՀՀ սնանկության դատարանի 15.02.2019թ. ԵԴ/0951/04/18 վճռով <Միքայել-Ռուզաննա > ՍՊԸ-ն /հասցե՝ ք. Երևան ,Սայաթ –Նովա 1 ,ՀՎՀՀ 01508399 ,պետական գրանցման համարը 273.040.01040 ,/ ճանաչվել է սնանկ:

Նույն դատարանի 19.02.2019թ որոշմամբ <Միքայել-Ռուզաննա > ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Արմինե Մովսիսյանը:

ՀՀ սնանկության դատարանի 03.06.2019 թ որոշմամբ հաստատվել է պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հետևյալ առաջնահերթությամբ և ապահովվածությամբ՝

1. Անի Միքայելի Հակոբյան - 2 500 000 ՀՀ դրամ ՀՀ դրամ <Սնանկության մասին> ՀՀ օրենքի 82 հոդված 1-ին մասի /Է/ հերթ – չապահովված պահանջ: 11.04.2019 19.05

2. Անի Հակոբյան – 500 000 ՀՀ դրամ <Սնանկության մասին> ՀՀ օրենքի 82 հոդված 1-ին մասի Դ/ հերթ – դատական ծախս պետական տուրք

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ – 10.342.271 ՀՀ դրամ <Սնանկության մասին> ՀՀ օրենքի 82 հոդված 1-ին մասի /Է/ հերթ – չապահովված պահանջ:

ՀՀ սնանկության դատարանի 09 դեկտեմբերի 2019թ որոշմամբ սկսվել է <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊ ընկերության նկատմամբ գործունեության դադարեցման վարույթ :

Անդրադառնալով միջնորդությանը հայտնեց ,որ 2009-2012թ աշխատել է <Էսկո Կոնցեռն > ՓԲԸ-ում ,իսկ 2012-2015թ <Էսկո-Ֆինանս >ՍՊԸ -ում որպես վարձու աշխատող :

<Միքայել -Ռուզաննա > ՍՊ ընկերության նկատմամբ սնանկ ճանաչելու դիմում ներկայացրել է ԱՁ Անի Միքայելի Հակոբյանի կողմից 28 դեկտեմբեր 2018թ :

Ա/Ձ Անի Միքայելի Հակոբյանի և <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊ ընկերության միջև 09.01.2018թ կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր և 01.10.2018 թվականին կնքված հանձնման-ընդունման ակտի համաձայն՝ հաստատվել է, որ Ա/Ձ Անի Միքայելի Հակոբյանը <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊ ընկերությանը մատուցել է իրավաբանական և փաստաբանական ծառայություններ՝ 125 ժամ տևողությամբ, որի ընդհանուր արժեքը կազմել է 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ :

Իր աշխատած տարիների ընթացքում ,որևէ ԱՁ Անի Միքայելի Հակոբյանի չի ճանաչել և նման աշխատակից չի եղել իր աշխատած կազմակերպություններում : Վերջինիս ճանաչել է սույն գործի շրջանակներում :

Համաձայն< Սնանկության մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի-

1. Պարտապանի հետ փոխկապակցված են համարվում՝ ա) պարտապանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական, դուստր կամ կախյալ իրավաբանական անձը. բ) պարտապանի ղեկավարը, ինչպես նաև տնօրենների խորհրդի (դիտորդ խորհրդի) անդամը, պարտապանի կոլեգիալ գործադիր մարմնի անդամը, գլխավոր հաշվապահը (հաշվապահը), ինչպես նաև սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու պահից վերջին մեկ տարվա ընթացքում նշված պաշտոններից ազատված անձը. գ) պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալի 20 և ավելի տոկոսին տիրապետող անձը. դ) պարտապանին կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձը կամ մարմնի անդամը: Պարտապանի նկատմամբ փոխկապակցված է համարվում նաև անձը, որը սույն մասում նշված ֆիզիկական անձանց հետ գտնվում է սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված հարաբերությունների մեջ, իսկ սույն մասի «գ» կամ «դ» կետերի հիմքով իրավաբանական անձի փոխկապակցվածության դեպքում՝ նաև այդ անձի՝ սույն մասի «բ» կետում նշված պաշտոն զբաղեցնող ֆիզիկական անձը: 2. Ֆիզիկական անձ պարտապանի հետ փոխկապակցված են համարվում նրա ամուսինը, նրանց հետ երկու աստիճան ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, եղբայրը, քույրը և նրանց հետ ուղիղ վայրընթաց ազգակցական կապերի մեջ գտնվող անձինք, ամուսնու եղբայրը, քույրը:
2. Կառավարչի և պարտատերերի հետ փոխկապակցված անձինք որոշվում են սույն հոդվածի առաջին և երկրորդ մասերով սահմանված կարգով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հայտնեց նաև ,որ<<Միքայել-Ռուզաննա>> ՍՊ ընկերության մասնակիցներ Հրաչյա Մարատի Գրիգորյանը ,Հակոբ Մարկոսյանը ,Մագրեֆինա Ղուլյանը հայցադիմում են ներկայացրել ՀՀ սնանկության դատարան ընդդեմ <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊ ընկերությանը և անհատ ձեռնարկատեր Անի Միքայելի Հակոբյանի 09 հունվար 2018թ <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊ ընկերության և անհատ ձեռնարկատեր Անի Միքայելի Հակոբյանի միջև կնքված վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասով ,որը 23 նոյեմբեր 2021թ ՀՀ սնանկության դատարանի վճռով մերժվել է /կցվում է վճռի պատճենը

Բողոքի հաջորդ մասով բողոքաբերը հայտնել է ,որ <սնանկության կառավարիչը տարիներ ի վեր չարամտորեն հայց չի ներկայացրել դատարան ,որպեսզի հետ բերի ընկերությունից խլված գույքը ,որը բխել է բացառապես Սարգիս Աղաբեկյանի շահերից >:

Անդրադառնալով այդ հարցին սնանկության գործով կառավարիչը պատասխանեց ,որ

Սարգիս Լևիկի Աղաբեկյանի և <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊԸ-ի միջև կատարված ք. Երևան, Կենտրոն համայնք, Սայաթ-Նովա փողոց 1 շենքի թիվ 30 կարի արտադրամասի՝ բաղկացած 102,54քմ տարածքի առուվաճառքին հայտնում եմ ,որ Սարգիս Լևիկի Աղաբեկյանը դիմելով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) խնդրել է Սարգիս Աղաբեկյանի և <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊԸ-ի միջև 08.08.2015թ. կնքված փոխառության թիվ 01 պայմանագիրը ճանաչել վավեր և <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊԸ-ին հարկադրել Սարգիս Աղաբեկյանի հետ 13.500.000 ՀՀ դրամ արժեքով կնքել ք. Երևան, Կենտրոն համայնք, Սայաթ-Նովա փողոց թիվ 1 շենքի թիվ 30 կարի արտադրամասի՝ բաղկացած 102,54քմ տարածքի առուվաճառքի պայմանագիր:

Դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հրավիրվել է նախնական դատական նիստ:

Դատարանը 13.06.2016թ. վճռով Սարգիս Լևիկի Աղաբեկյանի ընդդեմ <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊԸ-ի՝ պայմանագիրը վավեր ճանաչելու և պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին հայցը բավարարել է մասնակի.

<<Միքայել-Ռուզաննա>> ՍՊԸ-ին պարտավորեցնել Սարգիս Լևիկի Աղաբեկյանի հետ կնքել 13.500.000 ՀՀ դրամ արժեքով (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը), ք. Երևան, Կենտրոն համայնք, Սայաթ-Նովա փողոց 1 շենքի թիվ 30 կարի արտադրամասի՝ բաղկացած 102,54քմ տարածքի առուվաճառքի պայմանագիր: Հայցը մնացած մասով մերժել է:

Վճիռը չի բողոքարկվել և օրինական ուժի մեջ է մտել 2016թվականի հուլիսի 14-ին:

2020թվականի հունիսի 29-ին կատարվել է գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն, որով ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստր պետական միասնական գրանցամատյանում <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊԸ-ի տնօրեն է գրանցվել Հրաչյա Մարատի Գրիգորյանը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն գործով պատասխանող <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊԸ-ի նախկին տնօրեն Ռուզաննա Ավագյանն անձնական շահագրգռվածությունից ելնելով վճիռը չի բողոքարկել, որով էական վնասներ է հասցրել Ընկերությանը,նոր տնօրեն Հրաչյա Մարատի Գրիգորյանի հետ միասին կազմվել է վերքննիչ բողոք <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊԸ-ի կողմից կնքված պայմանագիրը վավեր ճանաչելու և պայմանագիրը կնքելուն պարտավորեցնելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 13 հունիս 2016թ վճռի դեմ :

Վերքաքննիչ դատարանը <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Արմինե Մովսիսյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մերժել է: /կցվում է որոշումը /:

Սույնով սնանկության գործով կառավարիչը դիմել է Վճռաբեկ դատարան և 09 հունիս 2021թ որոշմամբ վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության /կցվում է վճռաբեկ դատարանի որոշումը /:

Նաև բողոքաբերը հայտնել է ,որ կառավարիչը չկատարելով անհրաժեշտ գործողություններ հրաժարվում է հաստատել ներկայացուցչի լիազորությունները ,որպեսզի ընկերությունը կարողանա ԵԴ/36262/02/20 գործով ներկայացված պահանջներով իրացնել իր իրավունքները ,մասնավորապես դատարան ներկայացված հայցով հետ բերելու ընկերության գույքը :

**Սնանկության գործով կառավարիչը հայտնեց ,որ նոր տնօրեն Հրաչյա Մարատի Գրիգորյանի հետ համագործակցել է և իմ կողմից տրվել է լիազորագիր որոշակի գործողություններ կատարելու համար :** Վերջինս իր անունից նամակներ է ուղարկել փոստային ծառայության միջոցով ,որում առկա են եղել դատարկ թղթեր և միևնույն ժամանակ իր անունից ,իր ստորագրության նման կատարել է ստորագրություններ ,որի համար պատրաստվում է հաղորդում ներկայացնելու ՀՀ գլխավոր դատախազություն : Հայտնեց նաև ,որ վերջինս չարաշահել է իր վստահությունը ,որի համար էլ այլևս չի տրամարդրում լիազորագիր իր անունից հանդես գալու համար :

Ավելացրեց նաև ,որ նոր տնօրեն Հրաչյա Մարատի Գրիգորյանը նույնաբովանդակ դիմում է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան <<Միքայել-Ռուզաննա>> ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Արմինե Մովսիսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասով ,որը 14 հոկտեմբեր 2024թՀՀ սնանկության դատարանի որոշմամբ մերժվել է /կցվում է որոշումը/ :

Ինչպես արդեն նշվել է սույն արձանագրության մեջ, ՀՀ Արդարադատության նախարարության վերահսկողության վարչության պետ՝ Ա.Սուչյանի 05.11.2024թ.-ի թիվ /28,1/44847-2024 գրությամբ, հաղորդումը ուղարկվել է «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա,, ԻԿԿ-ին և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի1-ին մասի 3-րդ ենթակետի հիմքով, կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել է կարգապահական վարույթ, իսկ «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ի, Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ

կարգապահական վարույթի իրականացման կարգի հիմքով՝ կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի կողմից, 20.12.2024թ., 15.01.2025թ.-ին նշանակվել են կարգապահական հանձնաժողովի նիստեր:

Հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, այն է՝ 17.12.2024թ.-ին, Արմինե Մովսիսյանի կողմից «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ին է ներկայացվել Դիրքորոշում , որի վերաբերյալկառավարիչը պատշաճ ծանուցել է նաև բողոքաբեր Հրաչյա Գրիգորյանին :

15.01.2025 թ նշանակված լսումներին< Միքաել -Ռուզաննա > ՍՊԸ -ի տնօրենը չի ներկայացել և որևէ միջնորդություն նիստը հետաձգելու կամ այլ պատասխան չի ներկայացրել :

15.01.2025թ կարգապահական հանձնաժողովի նիստին ներկայացել էին կարգապահական հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանը և Հարություն Գևորգյանը, և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նիստի անցկացման համար քվորումն ապահովված էր, ուստի նշված նիստը համարվեց բացված, չնայած այն հանգամանքին, որ դիմումատուն, պատշաճ ծանուցված էր եղել նիստի անցկացման տեղի և ժամի մասին,սակայն չէր ներկայացել :Նշված օրը նիստին ներկայացել էր սնանկության գործով կառավարիչ Արմինե Մովսիսյանը :

Ժողովը բացեց կարգապահական հանձնաժողովի նախագահ Ա.Սարգսյանը, որը մասնակիցներին ընթերցեց սնանկության գործով կառավարիչ Արմինե Մովսիսյանի կողմից ներկայացված դիրքորոշումը և խնդրեց հայտնել իրենց կարծիքը ներկայացված դիրքորոշման վերաբերյալ:

**Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը հայտնեց,** որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումատուն իր դիմումում նշել է այնպիսի հանգամանքներ ,որոնք վերաբերվելի չեն սույն գործով կառավարչին ՝մասնավորապես փոխակապակցվածությունը պարտատիրոջ և կառավարչի , հայցեր ներկայացնելը դատարաններ ,լիազորագիր տրամադրել և այլ, հայտնեց ,որ սույն գործը ենթակա է կարճման :

**Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Սարգսյանը հայտնեց,** որ բողոք բարձրացնող անձը վարքագծի կանոնի խախտման փաստը չի պնդում ,մասնավորապես պատշաճ ծանուցվում է և չի ներկայանում հանձնաժողովի նիստերին և որևէ կերպ չի հայտնում իր բացակայության հիմքը ,նաև կառավարիչ կողմից չկան այնպիսի խախտումներ ,որոնք վերաբերվելի են վարքագծին ուստի վերջինս կարծիք հայտնեց վարույթը կարճելու վերաբերյալ

**Հանձնաժողովի անդամ, նախագահ Արման Սարգսյանը հայտնեց,** որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ ՝ նախ դիմումատուն նշել էր սնանկության գործով կառավարչի և պարտատիրոջ միջև առկա փոխակապակցվածությունը ,ինչը կառավարիչը հստակ ներկայացրեց դրա բացակայությունը ,դիմումատուի պահանջը կառավարչի կողմից հայցեր դատարան ներկայացնելու հարցը ,ինչն արդեն իսկ կատարվել էր և առաջին ատյանի դատարան և վերաքննիչ դատարան և վճռաբեկ դատարան ,դիմումատուի կողմից մատնանշված փաստաբանին համապատասխան լիազորագիր չտրամադրելու հարցին , կառավարիչը պնդեց ,որ արդեն իսկ մեկ անգամ տրամադրվել է լիազորագիր ,սակայն խախվտել է իր վստահությունը և այլևս չի համագործակցելու վերջինիս հետ :

Համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 1-րդ ենթակետը նախատեսում է, որ Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե՝ բացակայում են կարգապահական խախտման հիմքերը և հատկանիշները, ինչպես նաև այն փաստը, որ կառավարչի կողմից առկա չէ այնպիսի գործողություն, որը կարող է բերել վերջինիս նկատմամբ կարգապահական տույժի

կիրառմանը, ինչով պայմանավորված կառավարիչ՝ Արմինե Մովսիսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը **ենթակա է կարճման:**

Կից ներկայացվում է կարգապահական վարույթին առընչվող փաստաթղթերը՝ թերթից, ինչպես նաև նիստի ձայնագրության կրիչը:

Ա.Սարգսյան
Լ.Սարգսյան
Հ.Գևորգյան